

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՆՈՖԳՏՄ-երի համար ՓԼ/ԱՖ ոլորտային ռիսկի վերլուծության

Նախատեսված ոչ ֆինանսական գործունեության տեսակների և մասնագիտությունների (ՆՈՖԳՏՄ) համար ՓԼ/ԱՖ ոլորտային ռիսկի գնահատման նպատակը սպառնալիքների և խոցելի կողմերի բացահայտում է, ինչպես նաև փողերի լվացմանը և ահաբեկչության ֆինանսավորմանը հակազդելուն անհրաժեշտ՝ առկա ռիսկերին համարժեք գործողությունների ծրագրի մշակումը:

Սույն վերլուծության համար կիրառվել է Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրամադրված մեթոդաբանությունը: Գնահատումն իրականացվել է հետևյալ տեսակ ՆՈՖԳՏՄ-երի համար.

- Նոտարներ.
- Փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք.
- Անհատ ձեռնարկատեր հաշվապահներ և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք.
- Անհատ ձեռնարկատեր աուդիտորներ և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձինք.
- Ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք.
- Շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք և խաղատներ, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք.
- Թանկարժեք մետաղների և քարերի դիլերներ:

Յուրաքանչյուր ՆՈՖԳՏՄ-ի համար ռիսկի մակարդակը գնահատվում է սույն վերլուծության շրջանակներում դիտարկված այլ հաշվետու անձանց հետ համադրությամբ:

Ա. Սպառնալիքներ

1. Ընկալումը

Հայաստանի Հանրապետության իշխանությունների ընկալմամբ, ՓԼ/ԱՖ սպառնալիքների կենտրոնացումը համեմատաբար բարձր է անշարժ գույքի ոլորտում՝ պայմանավորված հետևյալ գործոններով.

- Հայաստանի տնտեսությունն էապես հիմնված է կանխիկի վրա.
- Շինարարությունը երկրի ՀՆԱ-ում որոշակի մաս է կազմում:

Թեպետ գործող օրենսդրությունում առկա են կանխիկի շրջանառության մասով որոշակի սահմանափակումներ, «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի նոր նախագծով նախատեսվում է կանխիկի շրջանառությունը կրճատելուն միտված լրացուցիչ քայլեր ձեռնարկել:

Ինչ վերաբերում է շինարարության ոլորտին, 2008 թվականից ի վեր տնտեսության այս ճյուղը զգալիորեն կրճատվել է, ինչի արդյունքում նվազել են անշարժ գույքի ոլորտից բխող ռիսկերը:

Վերը նշված հանգամանքները թույլ են տալիս անշարժ գույքի ոլորտում առկա սպառնալիքների մակարդակը գնահատել որպես չափավոր:

Մյուս ոչ ֆինանսական ոլորտներում առկա սպառնալիքների մակարդակը գնահատվում է որպես ցածր:

2. ՓԼ/ԱՖ իրավիճակի գնահատականն ըստ ոլորտների

ՖԴԿ-ն կամ այլ իրավասու մարմինները ՆՈՖԳՏՆ-երի ներգրավմամբ ՓԼ-ի կամ ԱՖ-ի դեպքեր չեն հայտնաբերել: Այդուհանդերձ, հաշվի առնելով հաշվետու անձանց յուրաքանչյուր տեսակի բաժինը երկրի համախառն ներքին արտադրանքում, ռիելտոական գործունեություն իրականացնող անձինք, ինչպես նաև անշարժ գույքի առուվաճառքի գործարքներին առնչվող նոտարները մյուս ՆՈՖԳՏՄ-երի համեմատ ՓԼ/ԱՖ տեսանկյունից համարվում են ավելի բարձր ռիսկային:

Այդուհանդերձ, հարկ է նշել, որ ուսումնասիրության ենթարկված ոլորտներից որևէ մեկը զգալի բաժին չունի ՀՆԱ-ում, իսկ որոշների բաժինն ընդհանրապես աննշան է, ինչը թույլ է տալիս ՆՈՖԳՏՄ-երի հետ կապված ընդհանուր ռիսկը գնահատել որպես միջին:

Բ. ՓԼ/ԱՖ նկատմամբ խոցելիությունը

1. Իրավական համակարգ

ՆՈՖԳՏՄ-երի գործունեությունը կարգավորող իրավական համակարգի խոցելի կողմերը կարող են որոշակի ազդեցություն ունենալ ռիսկի ընդհանուր մակարդակի վրա: ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից Հայաստանի ՓԼ/ԱՖ դեմ պայքարի համակարգի երրորդ փուլի փոխադարձ գնահատման հաշվետվության եզրահանգումների վրա հիմնվելով՝ ուսումնասիրության շրջանակներում հաշվի են առնվել իրավական համակարգի հետևյալ բացերը.

- ԱՖ հանցակազմի սահմանման մասով բացեր.
- Բարձր ռիսկային գործարքների դեպքում կիրառվող ընթացակարգերի մասով բացեր.
- Բարդ կամ անսովոր մեծ գործարքների, ինչպես նաև ակնհայտ տնտեսական կամ այլ իրավաչափ նպատակներ չհետապնդող անսովոր պայմաններով գործարքների նախադրյալները և նպատակը ուսումնասիրելու, այդ ուսումնասիրության արդյունքները փաստաթղթավորելու վերաբերյալ ուղղակի պահանջի բացակայություն.
- Ներքին իրավական ակտերի առկայության և արտաքին աուդիտի պահանջների անկիրառելիություն 10-ից պակաս աշխատակից ունեցող ՆՈՖԳՏՄ-երի նկատմամբ:

Ի լրումն իրավական համակարգի ընդհանուր բացերի, գաղտնիքի մասին նորմերով պաշտպանված տվյալների հասանելիության և նոտարների, փաստաբանների և իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների/ հաշվապահների և աուդիտորական/ հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց մասով մասնագիտական գաղտնիքի պահպանման իրավունքի հետ կապված անորոշությունները բացասաբար են անդրադառնում նշված ՆՈՖԳՏՆ-երի ռիսկի ընդհանուր մակարդակի վրա:

Շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց գործունեությունը

կարգավորող իրավական դաշտում առկա ռիսկերը գնահատվում են որպես բարձր՝ հաշվի առնելով հետևյալը.

- Բացակայում են խաղատների, շահումով խաղերի, այդ թվում՝ ինտերնետային շահումով խաղերի և վիճակախաղերի համար տնօրենների, սեփականատերերի և իրական շահառուների համապատասխանության ստուգման պահանջները.
- Խաղատների և շահումով խաղ կազմակերպող անձանց պարագայում ՀՊՈՒ պահանջների մեջ հաշվի առնված չեն այն գործարքները, որոնց ընդհանուր արժեքը հավասար է սահմանված նվազագույն շեմին կամ գերազանցում է այն:

2. Ոլորտում իրազեկվածության մակարդակը

ՆՈՖԳՏՄ-երի մյուս ոլորտների համեմատ գիտելիքների բացը զգալի է թանկարժեք մետաղների և քարերի դիլերների, ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց և շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց մասով:

Սա կարող է վկայել տարբեր գործոնների առկայության մասին, ինչպիսիք են վերահսկող մարմնի բացակայությունը և ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց, ինչպես նաև թանկարժեք մետաղների և քարերի դիլերների մեծ քանակը, կամ՝ խաղատների, շահումով խաղերի, այդ թվում՝ ինտերնետային շահումով խաղերի և վիճակախաղերի մասնագիտական ասոցիացիայի բացակայությունը:

Նոտարների, անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատեր աուդիտորների և աուդիտորական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և փաստաբանների, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց իրազեկվածության մակարդակը մյուս հաշվետու անձանց համեմատ ավելի բարձր է:

3. Պրոդուկտներ և մատուցման եղանակներ

Ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց, փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց, շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց և թանկարժեք մետաղների և քարերի դիլերների կողմից առաջարկվող պրոդուկտների ռիսկը մյուս հաշվետու անձանց կողմից առաջարկվողների համեմատ ավելի բարձր է՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Անշարժ գույքի առուվաճառքի գործարքները համարվում են բարձր ռիսկային, և ոլորտում առկա են բարձր ռիսկային պրոդուկտներ ու մատուցման եղանակներ, ինչպիսիք են կանխիկով գործարքների իրականացումը, երրորդ անձանց անունից կատարվող գործարքները և այլն:

Փաստաբաններ, ինչպես նաև իրավաբանական ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք մատուցում են ծառայությունների լայն տեսականի, այդ թվում՝ որոշ բարձր ռիսկային ծառայություններ, ինչպիսին է հաճախորդի համար ընկերության ձեռքբերման կամ վաճառքի գործարքի նախապատրաստումը կամ իրականացումը:

Շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց գործունեությունն ինքնին բարձր ռիսկի չափանիշ է, ուստի շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձինք և խաղատներ, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձինք նոտարների կամ անհատ ձեռնարկատեր հաշվապահների և հաշվապահական գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց համեմատ ավելի բարձր ռիսկային են: Շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց բարձր ռիսկայնությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ գործարքների մեծ մասը կատարվում է կանխիկով:

Ադամանդների վերամշակման ոլորտում առկա են մեծածավալ գործարքների իրականացման հնարավորություններ, որոնք կարող են անդրսահմանային ազդեցություն ունենալ: Միևնույն ժամանակ, ոսկերչական գործունեությամբ զբաղվողների կողմից մեծածավալ գործարքների իրականացումը սահմանափակ բնույթ է կրում:

Ուսումնասիրության ենթարկված մյուս հաշվետու անձանց վերագրվող ռիսկի մակարդակը գնահատվում է որպես միջինից ցածր:

4. Անդրսահմանային գործառնություններ

Ընդհանուր առմամբ, ՆՈՖԳՏՄ-երի կողմից կատարվող գործառնությունները և մատուցվող ծառայությունները տեղական բնույթ են կրում, և որևէ ոլորտի ներկայացուցիչներ լայնորեն ներգրավված չեն միջազգային գործառնություններում:

Օրինակ՝ հարցմանը մասնակցած փաստաբանների մեծ մասը նշում է, որ օտարերկրյա հաճախորդները կազմում են իրենց հաճախորդների ընդհանուր թվի 0-5%-ը, և որ իրենք երկրից դուրս ծառայություններ չեն մատուցում:

Ինչ վերաբերում է շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատներին, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց, նրանց օտարերկրյա հաճախորդները կազմում են իրենց հաճախորդների ընդհանուր թվի 25%-ից ոչ ավելին:

Թանկարժեք մետաղների և քարերի դիլերները մյուս ՆՈՖԳՏՄ-երի համեմատ անդրսահմանային գործառնություններում ներգրավվելու ավելի մեծ հնարավորություններ ունեն՝ հաշվի առնելով Հայաստանում ադամանդների վերամշակման ճյուղի առկայությունը:

5. Վերահսկողական միջոցներ

Հայաստանում գործող վերահսկողական ռեժիմի տեսանկյունից, հետևյալ տեսակի ՆՈՖԳՏՄ-երն ավելի բարձր ռիսկային են համարվում՝ հաշվի առնելով համապատասխան վերահսկող մարմինների բացակայությունը:

Ռիելտորական գործունեություն իրականացնող անձինք կարող են ՓԼ ռիսկերի տեսանկյունից խոցելի լինել, քանի որ նրանց գործունեության վերահսկողությունն իրականացվում է միայն անշարժ գույքի գնահատման մասով, իսկ գույքի առուվաճառքի նկատմամբ վերահսկողությունը բացակայում է:

Համեմատաբար բարձր ռիսկային այլ ՆՈՖԳՏՄ-երի թվին են պատկանում անհատ ձեռնարկատեր իրավաբանները և իրավաբանական ծառայություններ մատուցող ընկերությունները, թանկարժեք մետաղների և քարերի դիլերները (լիցենզավորման պահանջներ սահմանված են միայն որոշակի տեսակի դիլերների համար), անհատ ձեռնարկատեր հաշվապահները և հաշվապահական գործունեություն իրականացնող ընկերությունները, որոնք չեն լիցենզավորվում և վերահսկվում (սահմանված չեն շուկա մուտք գործելու պահանջներ):

Հարկ է նշել, որ լիցենզավորման և վերահսկողության ռեժիմը, ինչպես նաև շուկա մուտք գործելու պահանջները գործում են միայն փաստաբանների և գլխավոր հաշվապահների համար:

Համապատասխան մարմիններն արդյունավետորեն վերահսկում են մյուս տեսակի ՆՈՖԳՏՄ-երի գործունեությունը և օրենսդրության (այդ թվում՝ ՓԼ/ԱՖ դեմ պայքարի գծով օրենսդրական պահանջների) խախտման դեպքում կիրառվում են պատժամիջոցներ:

Այլ հաշվետու անձանց նկատմամբ վերահսկողությունը համարվում է բավարար, իսկ վերահսկողության հետ կապված ռիսկերը գնահատվում են որպես միջին կամ ցածր:

Ընդհանուր ռիսկը

ՆՈՖԳՏՄ-երի ոլորտում առկա բոլոր սպառնալիքների և խոցելի կողմերի ուսումնասիրության արդյունքներով, ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց, շահումով խաղ և վիճակախաղ կազմակերպող անձանց և խաղատների, այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղ կազմակերպող անձանց, թանկարժեք մետաղների և քարերի դիլերների ընդհանուր ռիսկի մակարդակը մյուս հաշվետու անձանց համեմատ գնահատվում է որպես համեմատաբար բարձր:

Առկա ռիսկերի միտումը դիտարկված բոլոր ՆՈՖԳՏՄ-երի համար կայուն է՝ բացառությամբ ռիելտորական գործունեություն իրականացնող անձանց: Այս տեսակի հաշվետու անձանց վերագրվող ռիսկի մակարդակը գնահատվում է որպես աճող՝ հաշվի առնելով օրենսդրական դաշտում տեղի ունեցած փոփոխությունները:

Թանկարժեք մետաղների և քարերի դիլերների մասով ռիսկի մակարդակը նվազման միտում ունի՝ հաշվի առնելով Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 710210000, 710221000 և 710231000 ծածկագրերով դասակարգվող «Մշակված կամ չմշակված, սակայն չշրջանակված կամ չամրացված ադամանդներ»-ի առևտրին, ներմուծմանը, արտահանմանը և տեղափոխմանն առնչվող գործունեության լիցենզավորման պահանջների ներդրումը: Ամեն դեպքում, նշված ՆՈՖԳՏՄ-երին վերագրվող ռիսկի մակարդակը բացարձակ մեծությամբ չի կարող բարձր համարվել:

Ուսումնասիրության ենթարկված մյուս հաշվետու անձանց վերագրվող ռիսկի մակարդակը գնահատվում է որպես ցածր: